

Ծանուցում և բողոքարկում՝ Կրթական օրենսգրքի 48853, 48853,5, 49069,5, 51225.1 և 51225.2 բաժինների համաձայն, կրթաշրջանը պետք է ստանդարտացվախի հայտարարություն փակցնի խնամակալության հանձնված, անապատան և անչափահասների դատարանում եղած աշակերտների կրթական իրավունքների մասին: Ծանուցման մեջ պետք է ներառվի բողոքարկման գործընթացի մասին տեղեկությունները:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՆՎԱՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի խորհրդի կանոններ 1312.3 - Գլենդելի հանրային դպրոցների Ուսումնական խորհուրդը հաստատում է, որ ուսումնական ծրագրերը ղեկավարելիս կրթաշրջանն ունի նահանգային ու դաշնային օրենքներին ու կանոններին հնազանդվելու գլխավոր պատասխանատվություն: Ուսումնական խորհուրդը խրախուսում է բողոքների վաղաժամկետ լուծումը հնարավորության դեպքում: Ավելի պաշտոնական գործընթաց պահանջող բողոքների լուծման համար, ուսումնական խորհուրդը պետք է բողոքարկման համընդհանուր ընթացակարգ որդեգրի, որը նշված է 5 CCR 4600-4670-ում և առկա վարչական կանոնադրության մեջ:

Գանգատարկման համընդհանուր ընթացակարգը (UCP) պետք է օգտագործվի հետևյալ բողոքները քննելու և լուծելու համար:

1. Չափահասների կրթության, արտաժամյա կրթության և ծրագրերի անվտանգության, գաղթականների կրթության, աշխատանքային տեխնիկական և տեխնիկական կրթության, աշխատանքային տեխնիկական, տեխնիկական վերապատրաստման, երեխայի խնամատարության և զարգացման ծրագրերի, երեխայի սննդառության ծրագրերի, Յուրաքանչյուր աշակերտի հաջողության հասնելու օրենքի/ոչ մի երեխա չպետք է անտեսվի օրենքի (Titles I-VII), հատուկ կրթության ծրագրերի, համադրված կատեգորիկ օգնության ծրագրերի և կրթաշրջանում իրագործվող այլ ծրագրերի, որոնք նշված են Կրթական օրենսգրքի 64000(a) բաժնում, ներառյալ գյուղատնտեսական աշխատանքային կրթության, Ամերիկացի հնդիկների կրթության կենտրոնների և վաղ կրթության ծրագրերի, գնահատումների, երկլեզվյան կրթության ծրագրերի, աշխատանքային տեխնիկական, անգլերեն լեզու սովորողների ծրագրերի, շրջանային աշխատանքային կենտրոնների և ծրագրերի, դպրոցի համադրված կատեգորիկ ծրագրերի, նահանգային նախակրթարանների, տնտեսական օգնության, Miller-Union տարրական ընթերցանության օրենքի, փոխհատուցման կրթական ծրագրերի, դպրոցից դուրս մնալու վտանգին ենթակա անբարենպաստ պայմաններում ապրող, անտեսված կամ կասկածյալ աշակերտներին նպաստ տրամադրելու ծրագրերի, հիմնական ծախսերի ֆինանսավորման, Կալիֆորնիայի ուսուցիչների գործընկերների օգնության և վերանայման ծրագրերի, մասնագիտական վերապատրաստման ծրագրերի, նորարարական ծրագրի ստրատեգիաների ծրագրերի, դաշնային «փոքր խմբերով դասարաններ» նախաձեռնության ներքո ստեղծված ծրագրերի, ծխախոտի կանխարգելման ծրագրերի, դպրոցի անվտանգության ծրագրի, դպրոցի անվտանգության և բռնության կանխարգելման ծրագրերի, անվտանգ և թմրանյութերից զերծ դպրոցների և համայնքի ծրագրերի (5 CCR 4610)
2. Անօրինակ խտրականության բողոքները (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կոմարարություն), որևէ աշակերտի, աշխատակցի կամ նահանգի կողմից ուղղակիորեն ֆինանսավորված կամ ֆինանսական օգնության կամ նպաստ ստացող կրթաշրջանի ծրագրերին կամ աշխատանքներին մասնակցող անհատի նկատմամբ, անհատի իրական կամ ենթադրյալ ազգի կամ ցեղի, գույնի, նախնիների, ազգության պատկանելության, ազգային ծագումի, գաղթական կարգավիճակի, ցեղային ինքնության, տարիքի, կրոնի, ամուսնական, հղիության կամ ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ մտավոր անկարողության, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ գենետիկական տեղեկությունների առանձնահատկությունների կամ որևէ այլ առանձնահատկության հիման վրա, որը նշված է կրթական օրենսգրքի 200 կամ 220 բաժնում, Կառավարական օրենսգրքի 11135 կամ քրեական

օրենսգրքի 422,55 կետում կամ նման իրական կամ ընկալական առանձնահատկությամբ անհատի կամ խմբի հետ կապ ունենալու հիման վրա (5 CCR 4610):

3. Բողոք՝ նորածնին կրծքով կերակրող աշակերտների համար, դպրոցում կաթ կթելու, կրծքով կերակրելու կամ կրծքով կերակրելու հետ կապված այլ կարիքներին համապատասխան հարմարություններ չտեղծելու վերաբերյալ (Education Code 222):
4. Բողոք՝ կրթական աշխատանքներին մասնակցելու համար աշակերտներից վճարում, կանխավճար կամ այլ տեսակի գանձումներ կատարելու կանոնը խախտելու վերաբերյալ (5 CCR 4610):
5. Բողոք՝ տեղական վերահսկման և հաշվետվության ծրագրի հետ կապված օրինական պահանջները խախտելու վերաբերյալ (Education Code 52075):
6. Բողոք՝ խնամակալության հանձնված աշակերտի կողմից կամ աշակերտի օգտին, աշակերտի տեղավորման որոշմանը վերաբերող օրինական պահանջների, աշակերտի նկատմամբ կրթաշրջանի կապի միջնորդների պարտականությունների, մի այլ դպրոցում կամ կրթաշրջանում ավարտած աշխատանքի համար քրեդիթ տալու, դպրոցը փոխելու կամ կրթական խորհրդի կողմից պարտադիր ավարտականի պահանջներից ազատելու կանոնը խախտելու վերաբերյալ (Education Code 48853, 48853.5, 49069.5, 51225.1, 51225.2):
7. Բողոք՝ անապաստան աշակերտի կողմից կամ աշակերտի օգտին, ինչպես սահմանված է 42 USC 11434a-ում, աշակերտի մի այլ դպրոցում կամ կրթաշրջանում ավարտած աշխատանքի համար քրեդիթ տալու կամ կրթական խորհրդի կողմից պարտադրված ավարտականի պահանջներից ազատելու կանոնը խախտելու վերաբերյալ (Education Code 51225.1, 51225.2):
8. Բողոք՝ անչափահասների դատարանի դպրոց հանախած աշակերտի կողմից կամ աշակերտի օգտին, ով կրթաշրջան է փոխադրվել երկու տարի ավագ դպրոցում ուսանելուց հետո, աշակերտի անչափահասների դատարանի դպրոցում ավարտած աշխատանքի համար քրեդիթ տալու, կամ կրթական խորհրդի կողմից պարտադրված ավարտականի պահանջներից ազատելու կանոնը խախտելու վերաբերյալ (Education Code 51225.1, 51225.2):
9. Բողոք՝ կրթական օրենսգրքի 51228.1 և 51228.2 կետերը խախտելու համար, որն արգելում աշակերտին արձանագրել կրթական բովանդակություն չունեցող դասընթացում մեկ շաբաթից ոչ ավելի որևէ կիսամյակում կամ որևէ դասընթացի, որ աշակերտը նախապես հաջողությամբ ավարտել է՝ առանց որոշակի պայմանների լրացնելով (Education Code 51210, 51223):
10. Բողոք՝ տարրական դպրոցում, աշակերտների համար պահանջվող մարմնամարզության ուսուցման թույլտվությունները չպահպանելու վերաբերյալ (Education Code 51210, 51223):
11. Վրեժխնդրության վերաբերյալ բողոք՝ բողոքարկուի կամ բողոքարկման գործընթացի մասնակցի դեմ կամ որևէ մեկի դեմ, ով աշխատել է բացահայտել կամ զեկուցել խախտման մասին, որը նշված է կանոնադրության մեջ:
12. Որևէ այլ բողոք, ինչպես նշված է կրթաշրջանի կանոնադրության մեջ:

Ուսումնական խորհուրդը հասկանում է, որ կախված խնդրի բնույթից, կարելի է առաջարկել խնդրի լուծման այլընտրանք (ADR), որն ընդունելի կլինի բոլոր կողմերի համար: Կարելի է ADR, ինչպես օրինակ՝ միջնորդություն, որ կարելի է առաջարկել այն բողոքների դեպքում, երբ մեկից ավելի աշակերտ է ներգրավված և ոչ մի չափահաս: Միջամտություն չպետք է առաջարկվի կամ օգտագործվի սեռական բռնության դեպքում կամ այն դեպքում, երբ կողմերը իրենց ստիպված կզգան միջամտությանը մասնակցել: Գերատեսուչը կամ նրա տեղակալը պետք է վստահ լինի, որ արդյունքները համահունչ են նահանգային և դաշնային օրենքներին և կանոններին:

Կրթաշրջանը պետք է բողոքարկուին պաշտպանի վրեժխնդրությունից: Բողոքարկման հետաքննության ժամանակ, ըստ օրենքի, ներգրավված կողմերի գաղտնիությունը պետք է պաշտպանված լինի: Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) դեմ ներկայացրած որևէ բողոքի դեպքում, ըստ պատշաճության, գերատեսուչը կամ նրա տեղակալը պետք է գաղտնի պահի բողոքարկուի ինքնությունը և/կամ բողոքի առարկան, եթե նա բողոքարկուին չէ, քանի դեռ պահպանվում է բողոքարկման գործընթացի ամբողջությունը:

Երբ UCP-ին չվերաբերող բողոք է ներկայացվում UCP-ին, կրթաշրջանը պետք է ոչ-UCP (UCP-ին չվերաբերող) բողոքառ հանձնի համապատասխան անձնակազմին կամ գործակալությանը, որը օպետք է քննի ու հնարավորության դեպքում UCP-ի հետ կապված խնդիրը լուծի կրթաշրջանի UCP-ի միջոցով:

Գերատեսուչը կամ նրա տեղակալը, վերապատրաստման պարապմունքների միջոցով, անձնակազմի անդամներին պետք է զինի գիտելիքներով և իրազեկ դարձնի գործող օրենքի և համապատասխամ պահանջների, ներառյալ քայլերի և ժամկետների մասին, որ նշված է այս կանոնադրության և վարչական կանոնադրության մեջ:

Գերատեսուչը կամ նրա տեղակալը պետք է պահի UCP-ի բողոքարկուների և հետաքննության բոլոր գրանցումները: Բոլոր այդպիսի գրանցումները պետք է ոչնչացնել նահանգային օրենքի և կրթաշրջանի կանոնադրության համաձայն:

Ոչ-UCP բողոքներ (Non-UCP Complaints)

Հետևյալ բողոքները կրթաշրջանի UCP-ին չվերաբերող բողոքներ են, որոնք պետք է հանձնարարվեն նշված գործակալությանը (5 CCR 4611):

1. Երեխայի չարաշահման հայտարարություններին վերաբերող հարցերը պետք է ուղղել Վարչաշրջանի սոցիալական ծառայությունների բաժանմունքին (DPSS), պաշտպանական ծառայությունների բաժանմունքին կամ համապատասխան իրավապահ գործակալությանը:
2. Երեխայի զարգացման ծրագրի վերաբերյալ առողջության և անվտանգության գանգատները պետք է հանձնել հանրային սոցիալական ծառայությունների բաժանմունքին՝ լիազորված կառույցների համար, և Երեխայի զարգացման տարածաշրջանային ղեկավարին ոչ լիազորված կառույցների համար:
3. Խարդախության վերաբերյալ բողոքը պետք է հանձնարարել Կալիֆորնիայի կրթական վարչության (California Department of Education) իրավական, վերահսկումների և համապատասխանելիության բաժնին:

Ցանկացած բողոք, որը վերաբերում է աշխատանքային խտրականությանը կամ ոտնձգությանը, պետք է քննվի և կարգավորվի կրթաշրջանի կողմից՝ AR 4030 Ոչ խտրականությանը աշխատանքի վայրում օրենքում նշված ընթացակարգերի հետ համապատասխան:

Ցանկացած բողոք, որը վերաբերում է բավարար քանակությամբ դասագրքերին և ուսումնական նյութերին, հրատապ կամ շտապ օգնության հարմարանքների պայմաններին, որոնք կարող են սպառնալ աշակերտի ու անձնակազմի առողջությանն ու անվտանգությանը, ուսուցիչների թափուր պաշտոններին և սխալ նշանակումներին, պետք է հետաքննվի և կարգավորվի Williams-ի համընդհանուր գանգատարկման ընթացակարգերի՝ AR 1312.4 ընթացակարգերի համաձայն:

Չ-վերաբերող հանրային դարձումների կրթաշրջանի վարչական կանոններ 1312.3:

Նպատակ և տեսողաշտ՝ Բացառությամբ, եթե Կրթական խորհուրդը որոշակիորեն մի այլ կրթաշրջանի Կանոններ կապահովի, ապա բողոքարկման համընդհանուր ընթացակարգը կօգտագործվի (UCP) միայն BP1312.3 նշված բողոքները քննելու և լուծելու համար:

Պատասխանատու պաշտոնյաներ

Կրթաշրջանը աշխատակիցներից անհատներ է ընտրում, որոնք պատասխանատու են ներկայացված բողոքներին անդրադառնալու համար հետևելով նահանգային և դաշնային քաղաքացիական իրավունքների մասին օրենքներին: Այդ անհատները ծառայում են որպես պատասխանատու պաշտոնյաներ, անօրինական խտրականությունները (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) հարթելու համար, ինչպես նշված է AR 5145.3-ի «ոչ խտրականություն/ոտնձգություն» բաժնում: Անհատները կստանան և կհամարեն հետաքննության արդյունքները օրենքին համահունչ:

Dr. Kelly King, Assistant Superintendent – Education Services
223 North Jackson Street
Glendale, CA 91206
(818)241-3111 x1209
kking@gusd.net

Dr. Lena Richter, Director of Categorical Programs

223 North Jackson Street
Glendale, CA 91206
(818)241-3111 x1457
lrichter@gusd.net

Պատասխանատու պաշտոնյան, ով ստանում է բողոքը, կարող է այդ բողոքի հետաքննությունը և լուծումը հանձնարարել մի այլ պատասխանատու պաշտոնյայի: Եթե մի այլ պատասխանատու պաշտոնյա է նշանակվել բողոքը հետաքննելու համար, պատասխանատու պաշտոնյան պետք է ժամանակին տեղեկացնի բողոքարկուին և մեղադրյալին, եթե վերաբերում է:

Ոչ մի դեպքում, չպետք է նշանակել մի պատասխանատու պաշտոնյա, ով կողմնակալություն կամ շահերի բախում ունի, որը թույլ չի տա նրան անկողմնակալ կերպով հետաքննություն կատարել և լուծել խնդիրը:

Պատասխանատու պաշտոնյայի դեմ բողոքը կամ պատասխանատու պաշտոնյայի արդարացի հետաքննությունը կատարելու և խնդիրը լուծելու ունակության վերաբերյալ մտահոգությունները պետք է ներկայացնել գերատեսչին կամ նրա տեղակալին, ով կորոշի, թե ինչպես պետք է հետաքննվի բողոքը:

Գերատեսուչը կամ նրա տեղակալը պետք է համոզված լինեն, որ պատասխատու պաշտոնյան, ում հանձնարարվել է բողոքի քննումն ու լուծումը, վերապատրաստվել է և գիտի օրենքի և բողոքում նշված խնդրի մասին: Այս աշխատակիցներին տրամադրվող վերապատրաստման աշխատանքները պետք է անդրադառնան նահանգային և դաշնային օրենքներին և կանոններին, ծրագրի ղեկավարման կանոններին, բողոքի հետաքննման և լուծման համար կիրառելի ընթացակարգին, ներառյալ ենթադրյալ անօրինական խտրականությունը (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կոմպարություն), որոշում կայացնելու կիրառելի չափանիշներին, համապատասխան ուղղիչ միջոցներին: Նշանակված աշխատակիցը կարող է կապվալ իրավախորհրդատուի հետ, ինչպես սահմանված է գերատեսչի կամ նրա տեղակալի կողմից:

Պատասխանատու պաշտոնյան կամ, եթե կարիք լինի, որևէ վարիչ պետք է որոշի, թե արդյոք հետաքննության և պատասխանին սպասելու ընթացքում անհրաժեշտ են միջոցներ: Եթե որոշվի, որ անհրաժեշտ են միջանկյալ միջոցները, պատասխանատու պաշտոնյան կամ վարիչը պետք է խորհրդակցի գերատեսչի, նրա տեղակալի կամ պատշանության ղեկավար, տնօրենի հետ, մեկ կամ ավելի միջանկյալ միջոցներ կիրառելու համար: Միջանկյալ միջոցները պետք է ուժի մեջ լինեն մինչև պատասխանատու պաշտոնյան կորոշի, որ դրանք այլևս անհրաժեշտ չեն կամ մինչև կրթաշրջանը կհայտնի իր գրավոր վերջնական որոշումը, որը որ ավելի շուտ լինի:

Ծանուցումներ՝

Ա. Կրթաշրջանի UCP-ի կանոնները և վարչական կանոնները պետք է փակցնել կրթաշրջանի բոլոր դպրոցներում և գրասենյակներում, ներառյալ հանգստի սենյակներում և աշակերտական ժողովների սենյակում (Education Code 234.1)

Ամեն տարի գերատեսուչը կամ նրա տեղակալը պետք է տրամադրի կրթաշրջանի UCP- ի ծանուցումները աշակերտներին, աշխատողներին, կրթաշրջանի աշակերտների ծնողներին/ խնամակալներին, կրթաշրջանի խորհրդատվական հանձնաժողովների անդամներին, դպրոցական խորհրդակցական հանձնաժողովի անդամներին, համապատասխան մասնավոր դպրոցի պաշտոնատար անձանց կամ ներկայացուցիչներին եւ այլ շահագրգիռ կողմերին: Ծանուցումները պետք է ներառեն տեղեկություններ խտրականության, գրպարտության և ահաբեկման արգելման, անօրինական ուսանողական վճարների եւ տեղական վերահսկողության եւ հաշվետվության ծրագրի պահանջների, ինչպես նաև խնամատարության հանձնված պատանիների, անապաստան աշակերտների, դատարանի դպրոց հանախած աշակերտների և զինվորական ընտանիքների երեխաների կրթական իրավունքներին առնչվող պահանջների մասին (Education Code 262.3, 4883.5, 48853.5, 49010-49013, 49069.5, 51225.1, 51225.2, 5CCR4622):

Ծանուցումն պետք է՝

1. Բացահայտի բողոքը ստանալու համար պատասխանատու անհատին(ներին), նրանց պաշտոնը(ները) և բաժինը(ները):
2. Բողոքարկուին տեղեկացնի քաղաքացիական իրավունքի պաշտպանության միջոցների մասին, որոնք կարող են մատչելի լինել նրան, նահանգային և դաշնային հակախտրականության օրենքի ներքո, եթե վերաբերում է:

3. Բողոքարկաուին տեղեկացնի բողոքարկման գործընթացի մասին, ներառյալ, եթե վերաբերում է, բողոքը ուղղակի Կալիֆորնիայի կրթական վարչության (CDE) ներկայացնելու կամ քաղաքացիական դատարանների կամ այլ պետական միջոցների դիմելու իրավունքի մասին, ինչպես օրինակ՝ ԱՄՆ-ի կրթական վարչության քաղաքացիական իրավունքների գրասենյակ (OCR), եթե անօրինական խտրականություն է կատարվել (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեում կամ կռվարարություն)»
4. Ներառի այն հայտարարությունները, որ
 - a. Կրթաշրջանի առաջնային պարտականությունն է վստահանալ, որ կիրառվում են կրթական ծրագրերին առնչվող նահանգային և դաշնային օրենքը և կանոնները:
 - b. Բողոքի քննարկումը պետք է ավարտվի այն ստանալուց հետո 60 օրվա ընթացքում, բացառությամբ եթե բողոքարկուն գրավոր համաձայնություն է տվել ժամկետը երկարացնելու համար:
 - c. Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ պտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բերաբերող բողոքները պետք է ներկայացնել դեպքը տեղի ունենալուց կամ բողոքարկուին հայտնի դառնալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Բողոքը ներկայացնելու ժամկետը կարելի է երկարաձգել մինչև 90 օր, գերատեսչի կամ նրա տեղեկալի կողմից՝ բողոքարկուի դիմումի համաձայն:
 - d. Բողոքը պետք է գրավոր ներկայացնել և բողոքարկուն պետք է ստորագրի այն: Եթե բողոքարկուն չի կարող իր բողոքը գրավոր ներկայացնել, օրինակ՝ հաշմանդամության կամ անգրագիտության պատճառով, կրթաշրջանի աշխատակիցները պետք է օգնեն նրան ներկայացնելու իր բողոքը:
 - e. Եթե բողոքը գրավոր չի ներկայացվել, բայց կրթաշրջանը մեղադրանքի տեղեկացում է ստացել, որը UCP-ի քննարկման նյութ է, կրթաշրջանը պետք է հաստատուն քայլեր կատարի մեղադրանքը հետաքննելու և հանգամանքներին համապատասխան եղանակով խնդրին անդրադառնալու համար:
Եթե մեղադրանքը վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) է վերաբերում և հետաքննությունները հաստատում են, որ խտրականություն է տեղի ունեցել, կրթաշրջանը խտրականության կրկնությունը կանխելու համար միջոցներ կձեռնարկի և կուղղի բողոքարկուի և մյուս անհատների վրա թողած խտրականության հետևանքները:
 - f. Հանրային դպրոցում արձանագրված աշակերտը չպետք է վճարի ուսումնական աշխատանքների համար, որը կրթաշրջանի կրթական ծրագրի անբաժանելի մասն է կազմում, ներառյալ՝ ուսումնական և արտածրագրային աշխատանքներին մասնակցելու համար:
 - g. Ուսումնական խորհրդից պահանջվում է LCAP-ի տարեկան վերանայումները կատարել այնպիսի եղանակով, որ ներառի ծնողների/խնամակալների, աշակերտների և այլ շահագրգռված կողմերի իմաստալից մասնակցությունը:
 - h. Խնամակալության հանձնված երիտասարդը պետք է տեղեկություն ստանա իր կրթական իրավունքների մասին, որոնք առնչվում են իր տեղավորման, դպրոցում արձանագրվելու և դուրս գրվելու մասին, ինչպես նաև կրթաշրջանի կապի պարտականությունները խնամատարության հանձնված երիտասարդի նկատմամբ, որն է վստահանալ և ապահովել այս պահանջները և օգնել աշակերտին, պատշաճ կերպով, քրեդիթի, տվյալների և գնահատականների փոխանցում կատարել, երբ աշակերտը մի դպրոցից մի այլ դպրոց՝ կամ մի կրթաշրջանից մի այլ կրթաշրջան է փոխադրվում:
 - i. Խնամակալության հանձնված աշակերտը, անապաստան աշակերտը կամ անչափահասների դատարանի դպրոց հանախած աշակերտը, ով տեղափոխվում է կրթաշրջանի ավագ դպրոց կամ մի կրթաշրջանից մի այլ կրթաշրջանի ավագ դպրոց է փոխադրվում, պետք է տեղեկացվի կրթաշրջանի պատասխանատվության մասին:
 - (1) Ընդունել աշակերտի մի այլ հանրային դպրոցում, անչափահասների դատարանի դպրոցում, մասնավոր դպրոցում, ոչ աղանդավորական դպրոցում կամ գործակալության դպրոցում ավարտած կամ մասամբ ավարտած դասընթացը և ամբողջական կամ մասնակի քրեդիթ տալ դասընթացի համար:
 - (2) Չպահանջել աշակերտից՝ կրկնել մի այլ հանրային դպրոցում, անչափահասների դատարանի դպրոցում, մասնավոր դպրոցում, ոչ աղանդավորական դպրոցում կամ գործակալության դպրոցում ավարտած կամ մասամբ ավարտած դասընթացը:
 - (3) Եթե աշակերտը նախքան փոխադրվելը ավարտել է ավագ դպրոցի երկրորդ ուսումնական տարին, նրան տեղեկացնել կրթաշրջանի ընդունած դասընթացների

և կրթական խորհրդի կողմից պարտադիր ավարտականի պահանջներով ազատ արձակվելու մասին, համաձայն կրթական օրենսգրքի 51225.1 կետի:

- j. Բողոքարկուն իրավունք ունի բողոքարկել CDE-ին կրթաշրջանի որոշման դեմ, գրավոր դիմում ներկայացնելով, կրթաշրջանի որոշումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում: Ցանկացած անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքի դեպքում, մեղադրյալը ևս պետք է իրավունք ունենա բողոք ներկայացնել CDE-ին նույն եղանակով, ինչպես բողոքարկուն, եթե նա համաձայն չէ կրթաշրջանի կայացրած որոշման հետ:
- k. CDE-ին ներկայացրած բողոքարկմանը պետք է կցել կրթաշրջանին ներկայացրած բողոքարկման և կրթաշրջանի որոշման պատճենները:
- l. Կրթաշրջանի UCP-ի օրինակը կարող էր ստանալ անվճար:

Տարեկան ծանուցումները և պատասխանատու պաշտոնյաների կապի ամբողջական տեղեկությունը և Title IX-ի վերաբերյալ տեղեկությունները, Education Code 221.61-ի համաձայն, պետք է տեղադրել կրթաշրջանի կայքէջում և կարելի է տրամադրել կրթաշրջանի հաստատած սոցիալական լրատվամիջոցների միջոցով, եթե առկա է:

Գերատեսուչը կամ նրա տեղակալը պետք է վստահանան, որ բոլոր աշակերտները և ծնողները/խնամակալները, ներառյալ անգլերենի սահմանափակ իմացությամբ աշակերտները և ծնողները/խնամակալները կարող են կրթաշրջանի կանոնների, ֆորմերի և UCP-ի ծանուցումների վերաբերյալ տեղեկություններ ունենալ:

Եթե կրթաշրջանի աշակերտության 15 տոկոսը կամ ավելին խոսում են մի այլ լեզվով, համաձայն Education Code 234.1 և 48985-ի կրթաշրջանի կանոնները, ֆորմերը և UCP-ի ծանուցումները պետք է թարգմանվեն այդ լեզուներով: Բոլոր դեպքերում, կրթաշրջանը պետք է վստահանա, որ անգլերենի սահմանափակ իմացությամբ ծնողները/խնամակալները կարող են UCP-ի վերաբերյալ տեղեկություններ ունենալ:

Կրթաշրջանի պարտականությունները

UCP-ին վերաբերող բոլոր բողոքները պետք է հետաքննվեն և լուծվեն այն ստանալուց հետո 60 օրվա ընթացքում, բացառությամբ, եթե բողոքարկուն գրավոր համաձայնություն է տվել ժամկետը երկարացնելու համար (5 CCR 4631):

Անօրինակ խտրականության (ինչպես սօրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) դեմ ներկայացրած բողոքի համար, կրթաշրջանը պետք է տեղեկացնի մեղադրյալին, երբ բողոքարկուն համաձայնում է մեղադրանքը հետաքննելու և լուծելու ժամկետը երկարացնել:

Պատասխանատու պաշտոնյան պետք է պահի յուրաքանչյուր բողոքի և հետագա գործողությունների արձանագրությունը, ներառյալ հետաքննության ընթացքում կատարած քայլերը և բոլոր տեղեկությունները՝ համաձայն 5 CCR 4631 և 4633 կետերի:

Մեղադրանքի մեջ ներգրավված բոլոր կողմերը պետք է տեղեկացվեն, երբ մեղադրանք է ներկայացվում և երբ որոշում է կայացվում: Այնուամենայնիվ, պատասխանատու պաշտոնյան պետք է բոլոր բողոքները և վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) վերաբերող մեղադրանքները գաղտնի պահի, բացառությամբ, երբ բացահայտումը անհրաժեշտ է հետաքննություն կատարելու և ուղղիչ միջոցներ ձեռնարկելու, շարունակական վերահսկման և գործընթացի ամբողջությունը պահպանելու համար (5 CCR 4630, 4964):

Բոլոր գանգատները պետք է պաշտպանված լինեն փոխհատուցումից:

Բողոք ներկայացնել

Բողոքը պետք է ներկայացնել պատասխանատու պաշտոնյային, ով պետք է ստացված բողոքների ցանկը պահի, յուրաքանչյուր բողոք կողավորի և թվագրի:

Բոլոր բողոքները պետք է գրավոր ներկայացնել և բողոքարկուն պետք է ստորագրի այն: Եթե բողոքարկուն չի կարող իր բողոքը գրավոր ներկայացնել, օրինակ՝ հաշմանդամության կամ անգրագիտության պատճառով, կրթաշրջանի աշխատակիցները պետք է օգնեն նրան ներկայացնելու իր բողոքը (5 CCR 4600):

Գանգատները պետք է ներկայացնել հետևյալ կանոնների համաձայն, ըստ կիրառելիության:

1. Ցանկացած գանգատ, որ ենթադրում է կիրառելի նահանգային կամ դաշնային օրենքի կամ կանոնների խախտում կրթաշրջանի կողմից, որ ղեկավարում է Ուսումնական խորհրդում նշված ծրագրերը («UCP-ին ենթակա գանգատները» բաժնի 1-ին կետը), կարող է ներկայացվել ցանկացած անհատի, հանրային կառույցի կամ կազմակերպության կողմից (5 CCR 4630):
2. Բողոք կրթական աշխատանքներին մասնակցելու համար աշակերտներից վճարում, կանխավճար և այլ տեսակի գանձումներ կատարելու կանոնը խախտելու կամ LCAP-ի հետ կապված որևէ պահանջի վերաբերյալ, եթե բողոքարկուն փաստեր է ներկայացնում կամ տեղեկություններ, որոնք հանգեցնում են փաստերի բացահայտմանը որը նպաստում է կանոնի խախտման մեղադրանքին: Կրթական աշխատանքներին մասնակցելու համար աշակերտներից անօրինական գանձումներ կատարելու մեղադրանքը կարելի է ներկայացնել դպրոցի տնօրենին կամ գերատեսչին կամ նրա տեղակալին: Այնուամենայնիվ, այսպիսի որևէ բողոք պետք է ներկայացնել խախտումը կատարելու թվականից մինչև մեկ տարվա ընթացքում (Education Code 49013, 52075; 5 CCR 4630):
3. Անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքը կարող է ներկայացնել միայն այն անհատը, ով ենթարկվել է անօրինական խտրականության կամ այն անհատը, ով հավատացած է, որ որևէ անհատ կամ խումբ ենթարկվել է անօրինական խտրականության: Բողոքը պետք է ներկայացնել անօրինական խտրականության պատահելուց հետո վեց ամսվա ընթացքում կամ անօրինական խտրականության մասին իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում: Բողոքը ներկայացնելու ժամկետը կարելի է երկարացնել մինչև 90 օր գրավոր դիմում ներկայացնելով գերատեսչին կամ նրա տեղակալին բացատրելով պատճառը (5 CCR 4630):
4. Երբ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքը անանուն է ներկայացվում, պատասխանատու պաշտոնյան պետք է հետաքննություն կատարի կամ այլ կերպով պատասխանի ըստ պատշաճության, կախված տեղեկության առանձնահատկությունից և վստահելիությունից և մեղադրանքի լրջությունից:
5. Երբ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքարկուն կամ ենթադրյալ գոհը բողոքարկուն չէ և գաղտնապահություն է պահանջում, պատասխանատու պաշտոնյան պետք է նրան տեղեկացնի, որ այդ պահանջը կարող է սահմանափակել կրթաշրջանի հետաքննություն կատարելու կամ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու կարողությունը: Գաղտնապահության պահանջը հարգելով, կրթաշրջանը, այնուամենայնիվ, ողջամիտ քայլեր է կատարում բողոքը հետաքննելու և լուծելու համար համաձայն պահանջի:

Միջնորդություն

Բողոքը ստանալուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան կողմերի հետ ոչ պաշտոնապես կքննարկի միջնորդություն օգտագործելու հավանականության մասին: Միջնորդություն կարող է առաջարկվել այն բողոքների դեպքում, երբ մեկից ավելի աշակերտ է ներգրավված և ոչ մի չափահաս: Այնուամենայնիվ, միջնորդություն չպետք է առաջարկվի կամ օգտագործվի սեռական բռնության դեպքում կամ այն դեպքում, երբ կողմերը իրենց ստիպված կզգան միջնորդությանը մասնակցել: Եթե կողմերը համաձայն լինեն միջնորդության հետ, պատասխանատու պաշտոնյան պետք է կատարի բոլոր նախապատրաստությունները այս գործընթացի համար:

Նախքան վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքի լուծման համար միջնորդության նախաձեռնումը, պատասխանատու պաշտոնյան պետք է վստահանա, որ բոլոր կողմերը համաձայն են, որ միջնորդը տեղեկանա գաղտնի տեղեկության մասին: Պատասխանատու պաշտոնյան պետք է կողմերին հայտնի, որ նրանք իրավունք ունեն ոչ պաշտոնական գործընթացը դադարեցնել ցանկացած ժամանակ:

Եթե օրենքի սահմաններում, միջնորդության միջոցով խնդիրը չլուծվի, պատասխանատու պաշտոնյան պետք է շարունակի իր հետաքննությունը:

Միջնորդության գործընթացը չպետք է երկարացնի կրթաշրջանի բողոքը հետաքննելու և լուծելու համար սահմանած ժամկետը, բացառությամբ, եթե բողոքարկուն գրավոր համաձայնել է ժամկետը երկարացնելու հետ: Եթե միջնորդությունը հաջող ավարտվի, բողոքը հանվում է և կրթաշրջանը կկատարի միայն միջնորդության միջոցով համաձայնեցված գործողությունները: Եթե միջնորդությունը անարդյունք լինի, կրթաշրջանը պետք է շարունակի վարչական կանոնակարգով սահմանված քայլերը:

Բողոքի հետաքննում

Բողոքը ստանալուց հետո մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան պետք է սկսի հետաքննություն կատարել:

Հետաքննությունը նախաձեռնելուց հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան պետք է բողոքարկուին կամ նրա ներկայացուցչին հնարավորություն տա ներկայացնելու բողոքում ներառված տեղեկությունները և պետք է բողոքարկուին կամ նրա ներկայացուցչին տեղեկացնի բողոքին նպաստող ապացույցներ կամ ապացույցներին հանգեցնող տեղեկություններ ներկայացնելու հնարավորություն մասին: Այսպիսի ապացույցներ կամ տեղեկություններ կարելի է ներկայացնել հետաքննության ամբողջ ընթացքում:

Հետաքննություն կատարելիս, պատասխանատու պաշտոնյան պետք է հավաքի բոլոր փաստաթղթերը և վերանայի բոլոր մատչելի արձանագրությունները, գրառումները կամ բողոքին վերաբերող հայտարարությունները, ներառյալ հետաքննության ընթացքում, կողմերից ստացած որևէ լրացուցիչ ապացույց կամ տեղեկություն: Նա պետք է առանձին հարցազրույց անցկացնի բոլոր վկաների հետ ովքեր բողոքի հետ կապված տեղեկություններ ունեն և կարող են այցելել այն վայրերը, որտեղ տեղի են ունեցել գործողությունները: Պատասխանատու պաշտոնյան համապատասխան պարբերականությամբ, պետք է երկու կողմերին տեղեկացնի հետաքննության ընթացքի մասին:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքի հետաքննություն կատարելիս, պատասխանատու պաշտոնյան պետք է առանձին և գաղտնի հարցաքննի ենթադրյալ գոհին, ենթադրյալ հանցագործին և վկաներին: Ըստ անհրաժեշտության, անձնակազմի այլ անդամները կամ իրավաբանները կարող են վարել կամ նպաստել հետաքննությանը:

Եթե բողոքարկուն հրաժարվի կրթաշրջանի հետաքննողին մեղադրանքին վերաբերող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ ներկայացնել, չհամագործակցել կամ խոչընդոտել, բողոքը կփակվի ապացույցների բացակայության պատճառով: Նմանապես, եթե մեղադրյալը հրաժարվի կրթաշրջանի հետաքննողին մեղադրանքին վերաբերող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ ներկայացնել, չհամագործակցի կամ խոչընդոտի հետաքննության աշխատանքները, ապա հավաքած ապացույցների հիման վրա որոշում կկայացվի, որ խախտումը տեղի է ունեցել և միջոցներ կկիրառվի ի օգուտ բողոքարկուի (5 CCR 4631):

Ըստ օրենքի, կրթաշրջանը պետք է մեղադրանքին վերաբերող բոլոր արձանագրությունները և այլ տեղեկությունները մատչելի դարձնի հետաքննողին և չպետք է խոչընդոտի հետաքննության աշխատանքները: Կրթաշրջանի համագործակցությունից հրաժարվելը կհանգեցնի հավաքած ապացույցների հիման վրա դատավճիռ կայացնելուն, ըստ որի խախտումը տեղի է ունեցել և միջոցներ կկիրառվի ի օգուտ բողոքարկուի (5 CCR 4621):

Պատասխանատու պաշտոնյան պետք է դիմի «ապացույցների գերակշռության» չափորոշիչին, մեղադրանքի փաստացի ճշմարտացիությունը որոշելու համար: Այս չափորոշիչը բավարարվում է, եթե մեղադրանքի ճիշտ լինելու հավանականությունը ավելի մեծ է:

Արդյունքների գեկուզում

Վերջնական որոշումը պետք է բողոքարկուին ուղարկվի բողոքը ստանալուց հետո, 60 օրվա ընթացքում, բացառությամբ, եթե ժամկետը երկարացվել է գրավոր համաձայնությամբ: Բողոքն ստանալուց հետո, 30 օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան պետք է գրավոր գեկույց պատրաստի և բողոքարկուին ուղարկի, ինչպես նկարագրված է «Վերջնական գրավոր որոշում»-ի մեջ: Եթե բողոքարկուն դժգոհ է պատասխանատու պաշտոնյայի որոշումից, նա կարող է հինգ աշխատանքային օրվա ընթացքում բողոք ներկայացնել ուսումնական խորհրդին:

Ուսումնական խորհուրդը կարող է խնդիրը քննարկել ուսումնական խորհրդի հաջորդ ժողովին կամ արտակարգ ժողով գումարել, 60 օրվա ժամկետը պահպանելու համար: Երբ օրենքով պահանջվում է, խնդիրը

պետք է փակ դռների հետևում քննարկվի: Ուսումնական խորհուրդը կարող է բողոքարկուին չստելու որոշում կայացնել, որի դեպքում պատասխանատու պաշտոնյայի որոշումը վերջնական կլինի:

Եթե ուսումնական խորհուրդը լսի բողոքը, պատասխանատու պաշտոնյան պետք է բողոքը ստանալուց հետո՝ 60 օրվա ընթացքում, կամ գրավոր համաձայնագրում նշված ժամկետում, ուսումնական խորհրդի որոշումը ուղարկի բողոքարկուին (5 CCR 4631):

Անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) որևէ բողոք լուծելիս, մեղադրյալին ևս պետք է ուղարկվի կրթաշրջանի որոշումը: Մեղադրյալը, կայացված որոշումից դժգոհ լինելու դեպքում, կարող է բողոք ներկայացնել ուսումնական խորհրդին այնպես ինչպես բողոքարկուն:

Վերջնական գրավոր որոշում

Բողոքը լուծելու եղանակի վերաբերյալ կրթաշրջանի որոշումը պետք է լինի գրավոր և պետք է բողոքարկուին ուղարկվի (5 CCR 4631):

Կրթաշրջանի իրավաբանի հետ խորհրդակցելով, որոշմանը վերաբերող տեղեկությունը կարելի է հաղորդել գոհին, ով բողոքարկուին չէ, և մյուս կողմերին, որոնք կարող են ներգրավվել որոշման իրականացման մեջ կամ վնասվել են բողոքից, քանի դեռ պահպանվում է կողմերի գաղտնիությունը: Անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքի դեպքում, ենթադրյալ գոհին ուղարկված կրթաշրջանի որոշման մասին նամակը պետք է ներառի մեղադրյալի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների մասին տեղեկություններ, որոնք ուղղակի առնչվում են ենթադրյալ գոհի հետ:

Եթե բողոքը անգլերենի սահմանափակ իմացությամբ աշակերտի կամ ծնողի/խնամակալի հետ է կապված և ներգրավված աշակերտը հաճախում է մի դպրոց, որ աշակերտության 15 տոկոսը կամ ավելին անգլերենից բացւ մի այլ լեզվով են խոսում, ապա որոշումը պետք է նաև թարգմանվի: Մյուս բոլոր դեպքերում, կրթաշրջանը առնչվող տեղեկությունները իմաստալից կերպով պետք է մատչելի դարձնի անգլերենի սահմանակ իմացությամբ ծնողների/խնամակալների համար:

Բոլոր բողոքների համար, որոշումը պետք է ներառի՝ (5 CCR 4631)

1. Եզրակացությունը հիմնված է հավաքած փաստերի վրա: Փաստացի որոշման հանգելու համար, պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝
 - a. Վկանների կատարած ցուցմունքները
 - b. Ներգրավված անհատների հարաբերական վստահելիությունը
 - c. Ինչպես է բողոքարկու անհատն արձագանքել միջադեպին
 - d. Ենթադրյալ վարքագծի հետ կապված որևէ փաստ կամ այլ ապացույց
 - e. Ենթադրյալ մեղադրյալի կողմից անցյալում ցուցաբերված նման վարքագիծ
 - f. Բողոքարկուի կողմից անցյալում կատարված կեղծ մեղադրանքներ

2. Օրենքի եզրակացություն(ներ)

3. Բողոքի կարգադրում

4. Այսպիսի կարգադրման բացատրություն

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքի համար բողոքի կարգադրումը պետք է ներառի յուրաքանչյուր մեղադրանքի համար մի որոշում՝ թե արդյոք վրեժխնդրություն կամ անօրինական խտրականություն է պատահել:

Թշնամական միջավայրի գոյություն ունենալու որոշումը կարող է ներառել հետևյալները՝

- a. Ինչպես է վատ վարքագիծը ազդել մեկ կամ ավելի աշակերտների կրթության վրա
 - b. Վատ վարքի տեսակը, հաճախականությունը և տևողությունը
 - c. Ենթադրյալ գոհի և մեղադրյալի հարբերությունը
 - d. Ցուցաբերված վարքի մեջ ներառված անհատների թիվը և ում էր ուղղված այդ վարքը
 - e. Դպրոցի չափը, միջադեպի վայրը և հանգամանքները
 - f. Դպրոցում պատահած այլ միջադեպեր տարբեր անձանց մասնակցությամբ
5. Ուղղիչ գործողություն(ներ), ներառյալ կատարված կամ կատարվելիք որևէ գործողություն բողոքի

մեջ ներառված մեղադրանքին անդրադառնալու համար, ներառյալ աշակերտի վճարումների վերաբերյալ բողոքներին, մի միջոց, որը համապատասխանում է կրթական օրենսգրքի 49013 բաժնին և 5 CCR 4600 կետին:

Անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքի համար, ծանուցումը, ըստ օրենքի, կարող է պարունակել՝

- a. Մեղադրյալի վրա դրված ուղղիչ գործողություններ:
 - b. Բողոքարկուին կամ բողոքարկման առարկան անհատին առաջարկված կամ տրամադրված անհատական միջոցներ, բայց այս տեղեկությունները չպետք է հայտնել մեղադրյալին:
 - c. Օրինավոր միջոցներ, որ դպրոցը ձեռնարկել է թշնամական միջավայրը վերացնելու և կանխելու համար:
6. Կրթաշրջանի որոշումը բողոքարկելու և 15 օրվա ընթացքում CDE-ին դիմելու նրա իրավունքի և ընթացակարգի վերաբերյալ ծանուցումը պետք է բողոքարկուին ուղարկվի:

Որոշումը կարող է ներառել հետագայում կիրառվող ընթացակարգը՝ միջադեպը կամ վրեժխնդրությունը կանխելու և հետագա խնդիրները գեկուցելու համար:

Ըստ օրենքի, անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքի համար, որոշումը պետք է ներառի բողոքարկուին ուղղված ծանուցում, որ՝

- a. Նա կարող է դիմել քաղաքացիական դատարան, կրթաշրջանի բողոքարկման ընթացակարգից դուրս, ներառյալ միջամտության կենտրոնից կամ հանրային/մասնավոր փաստաբանի օգնության դիմել, CDE-ին բողոք ներկայացնելուց 60 օրվա ընթացքում (Education Code 262.3):
- b. 60 օրվա ժամկետը չի վերաբերում այն բողոքներին որ դատական օգնություն են փնտրում նահանգային դատարանում կամ խտրականության բողոքարկումներ ըստ դաշնային օրենքի (Education Code 262.3):
- c. Ազգի, գույնի ծագման, սեռի, անկարողության կամ տարիքի հետ կապված բողոքարկումները, նույնպես կարելի է ներկայացնել ԱՄՆ-ի կրթական վարչության քաղաքացիական իրավունքների գրասենյակին՝ www.ed.gov/ocr կայք այցելելով, ենթադրյալ խտրականության միջադեպից 180 օրվա ընթացքում:

Ուղղիչ գործողություններ

Երբ պարզվի, որ բողոքը արժեվորված է, պատասխանատու պաշտոնյան պետք է օրենքով թույլատրված համապատասխան ուղղիչ գործողություններ ձեռնարկի: Համապատասխան ուղղիչ գործողությունները կարող են կենտրոնանալ ընդհանուր դպրոցի կամ կրթաշրջանի կանոնների ամրապնդում, աշխատակիցների, անձնակազմի և աշակերտների վերապատրաստում, դպրոցի կանոնների արդիականացում կամ դպրոցի մթնոլորտի հարցաշար:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն), բողոքի համար համապատասխան միջոցներ, որոնք կարող են առաջարկվել գոհին, բայց չհաղորդվել մեղադրյալին, կարող է ներառել, բայց չսահմանափակվել, հետևյալները՝

1. Խորհրդատվություն
2. Ուսումնական աջակցություն
3. Առողջական ծառայություններ
4. Ուղեկցորդ նշանակել, որպեսզի գոհը կարողանա ապահով շրջել դպրոցում
5. Տեղեկություն մատչելի միջոցների մասին և ինչպես գեկուցել նմանատիպ միջադեպերը կամ վրեժխնդրությունը
6. Չոհին առանձնացնել միջադեպի մեջ ներգրավված անձանցից, բայց ոչ պատժի տեսքով
7. Վերականգնող արդարադատություն
8. Հետևել վստահանալու, որ վարքագծի դրսևորումը դադարել և վրեժխնդրության դեպքեր չեն եղել:
9. Որոշել, թե արդյոք գոհի անցյալ գործողությունները, որ հանգեցրել է պատժի, կապված է գոհի ստացած բուժման հետ և բացատրվել է բողոքագրում:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքի համար, համապատասխան ուղղիչ գործողությունները, որ կենտրոնանում է օրինազանց աշակերտի վրա, կարող է ներառել, բայց չսահմանափակվել, հետևյալները՝

1. Մի այլ դասարան կամ դպրոց փոխադրել համաձայն օրենքի
2. Ծնողի/խնամակալի հետ ժողով
3. Կրթություն այն մասին, թե վարքագիծը ինչպես է ազդում մյուսների վրա
4. Դրական վարքի օժանդակություն
5. Հանձնարարել աշակերտի հաջողությունները ուսումնասիրող հանձնախմբին (SST)
6. Չրկել արտադպրոցական կամ արտադասարանական աշխատանքներից, համաձայն օրենքի
7. Պատժամիջոցներ, ինչպես օրինակ, կախակայում կամ հեռացում, համաձայն օրենքի

Երբ պարզվի, որ աշխատակիցը վրեժխնդրություն կամ անօրինական խտրականություն (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) է կատարել, կրթաշրջանը պետք է պատժամիջոցներ ձեռք առնի, ընդհուպ մինչև աշխատանքից ազատում, համաձայն գործող օրենքի և կոլեկտիվ բանակցությունների պայմանագրի:

Կրթաշրջանը կարող է վերապատրաստում և այլ միջամտություններ տրամադրել ամբողջ դպրոցի համայնքին, որպեսզի վստահ լինի, որ աշակերտները, անձնակազմը և ծնողները/խնամակալները հասկանում են, թե ինչ վարքագիծ է անօրինական խտրականություն (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) համարվում, որ կրթաշրջանը դա չի հանդուրժում և ինչպես զեկուցել և արձագանքել դրան:

Երբ բողոքը իրենից կարևորություն է ներկայացնում, բողոքողին կամ վնաս կրած այլ անձին համապատասխան միջոցներ են տրամադրվում:

Եթե զանգատը, որը ենթադրում է անհամապատասխանություն աշակերտների վճարների, կանխավճարների և այլ ծախսերի, տարրական դպրոցներում աշակերտների մարմնամարզության դասի բույսերի և LCAP-ի որևէ պահանջի վերաբերյալ օրենքների հետ, հիմք ունենա, ապա կրթաշրջանը պետք է միջոցներ տրամադրի բոլոր տուժված աշակերտներին և ծնողներին/խնամակալներին՝ համաձայն նահանգային կրթական խորհրդի կանոնակարգի ընթացակարգերի (Education Code 49013, 51223, 52075):

Գանգատները, որոնք ենթադրում են անհամապատասխանություն աշակերտների վճարների օրենքների հետ կապված, կրթաշրջանը պետք է բարեխղճորեն, ողջամիտ կերպով ջանք գործադրելով, հայտնաբերի և ամբողջությամբ վերադարձնի բոլոր վնաս կրած աշակերտներին և ծնողներին/խնամակալներին, ովքեր վճարել են անօրինական գանձումների համար, բողոքը ներկայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում (Education Code 49013; 5 CCR 4600):

Բողոք ներկայացնել Կալիֆորնիայի կրթական վարչությանը

Կրթաշրջանի վերջնական գրավոր որոշումից դժգոհ որևէ բողոքարկու կարող է գրավոր բողոք ներկայացնել CDE-ին կրթաշրջանի որոշումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում (Education Code 222, 48853, 48853.5, 49013, 49069.5, 51223, 51225.1, 51225.2, 51228.3, 52075; 5 CCR 4632):

Երբ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ կռվարարություն) բողոքի մեղադրյալը կրթաշրջանի վերջնական գրավոր որոշումից դժգոհ է, նա կարող է բողոքարկուի նման բողոք ներկայացնել CDE-ին:

Բողոքարկուն կամ մեղադրյալը պետք է նշեն որոշման դեմ բողոքարկելու հիմքը ր նեն, թե արդյոք փաստերն են սխալ եղել և/կամ օրենքը խախտվել է: Բողոքը պետք է ներկայացվի CDE-ին՝ նախապես ներկայացված զանգատի պատճենի և այդ բողոքի վերաբերյալ կրթաշրջանի որոշման պատճենը (5 CCR 4632):

Երբ CDE-ը հայտնի, որ բողոքարկուն բողոքել է կրթաշրջանի որոշման դեմ, գերատեսուչը կամ նրա տեղակալը պետք է CDE-ին ուղարկեն հետևյալ փաստաթղթերը (5 CCR 4632)՝

1. Բնօրինակ բողոքագրի պատճեն
2. Գրավոր որոշման պատճեն
3. Կրթաշրջանի կատարած հետաքննության բնույթի և ծավալի ամփոփում, եթե ներառված չէ որոշման մեջ:

4. Հետաքննության գործերի պատճենը, ներառյալ, բայց ոչ սահմանափակված, բոլոր գրառումները, հարցագրույցները և կողմերի ներկայացրած և հետաքննողի հավաքած փաստաթղթերը:
5. Բողոքը լուծելու համար ձեռնարկված գործողության զեկույց
6. Կրթաշրջանի բողոքարկման համընդհանուր գործընթացի պատճեն
7. CDE-ի պահանջով առնչվող այլ տեղեկություններ